


623.459
7 - 31





Պատրիան
յեղիք ՀՈՔԻ-Ի
համար

~~823~~
~~7-31~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ

04 AUG 2010

ՊԱՇԱՎԻ ԱՐԺԻՄԸ ԽՈՀՄ Խ Ա.Պ.Պ. ԱՇԽԱՏԱՆՔԻ Կ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԴԱՆ Ե

623.459
Դ-31 11-167

ՊԱՏՐՈՍ ՅԵՂԻԲ

ՀՈ-ՔՊ-Ի ՀՈ.ՄԱՐ

ԶԵՐՆԱՐԿ ԱՌԱՋԻՆ ԱՄՏԻՃԱՆԻ «ՊԱՏՐԱՍ ԵՄ
ՀՈ-ՔՊ-Ի» ՆՈՐՄԱՆԵՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Քաղաքային բնակչության համար)

Թարգմանություն ռուսերեն Յ-րդ հրատարակությունից



ՀԱՅԿԱԿԱՆ ՑՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ

1940

17 JUL 2013

13.388

«Պատրաստ յեղիք ՀՈՔ-ի համար» գիրքը մի ձեռնարկ է, վորով պետք և պատրաստվել հանձնելու առաջին աստիճանի «Պատրաստ եմ ՀՈՔ-ի» նորմաները (քաղաքային բնակչության համար):

Գրքում հակառային ու քիմիական պաշտպանության մասին տեղեկություններ են արված այն ծավալով, վոր պահանջվում է ըստ առաջին աստիճանի «Պատրաստ եմ ՀՈՔ-ի համար» նորմաների և այն կարգով, վոր վորոշված և պատրաստության նոր ծրագրով՝ հաստատված ԽՍՀՄ Պաջապահմիքի ԿԽ-ի ՀՈՔ-ի վարչության կողմից: Իր բովանդակությամբ և շարադրման բնույթով գիրքն զգալի չափով տարբերվում է «Պատրաստ յեղիք հակառային ու հակաքիմիական պաշտպանության համար» ձեռնարկից (Բազմհաստի 4-րդ հատարակություն, 1937թ.):



БУДЬ ГОТОВ К ПВХО

Արմգիզ. Երևան, 1940 թ.

ՆՈՐՄԱ Ա.Ա.ՋԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Հ Ո Ք Պ-Ի ՄԱՍԻՆ

ԹԵՄԱ 1

ՊԱԶԱՎԻԱՅԻՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱՌՈՒՅՑԻՆ ՅԵՎ ՀԱԿԱԲԻՄԻՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
Ա.ՍՊԱՐԵԶՈՒՄ

ՄԵՆՔ ապրում ենք միջազգային խիստ լարված միջավայրում: Ծավալվում ե յերկրորդ խմբերիալիստական պատերազմը:

Ամբողջ խորհրդային ժողովուրդը կենսագործում ե ընկեր Ստալինի առաջադրած խնդիրները.

... «Հարկավոր և ամեն կերպ ուժեղացնել ու ամրապնդել մեր կարմիր բանակը, կարմիր նավատորմիլը, կարմիր ավելացնան, Պաջալիաքիմը: Մեր ամբողջ ժողովուրդը ռազմական հարձակման վտանգի դեմ հանդիման պետք ե պահել մորիլիշացիոն պատրաստության վիճակում, վորպեսզի վոչ մի «պատահականություն» և մեր արտաքին թշնամիների վոչ մի ֆուկու չկարողանան մեզ հանկարծակի բերել»...

Ընկեր Ստալինի այս ցուցմունքը Պաջալիաքիմի ամբողջ աշխատանքի հիմքն ե կազմում: Այդ ցուցմունքն առանձնահատուկ նշանակություն ունի Պաջալիաքիմի աշխատանքի, բնակչության հակառային և հակաքիմիական պաշտպանության պարեզում:

Ժամանակակից ավիացիան՝ միացած քիմիայի հետ հանդիսանում ե հարձակման հզոր միջոց վոչ միայն զորքերի, այլ նաև խոր թիկունքի վրա՝ նրա ֆարբիկաներով ու դործարաններով, քաղաքական և վարչական կենտրոններով, յերկաթուղային հանգույցներով, ելեկտրոկայաններով և այլն: Քիմիան ավիացիային զինում ե պայթուցիկ և հրդեհիչ նյութերով, և, բացի դրանից, մասսայական թունավորումներ առաջ բերող հատուկ

Քիմիական նյութերով — մարտական թունավոր նյութերով (թ՛Ն) :

Ողային հարձակումների հետևանքով թիկունքի աշխատանք-ների խանդարումը կարող է անդրադառնալ բանակի դործողությունների վրա և կվաղմալուծի յերկրի պաշտպանության ամ-բողջ սխառեմը : Միայն լավ կազմակերպված, անխափան աշ-խատող թիկունքը կարող է առահօվել գորքերի լիակատաք հա-չողությունը ուղղամահակատում : Թիկունքի կայունությունը—աշխատանքի հիմնական պայմանն է :

«Աշխարհում վոչ մի բանակ հաղթել չի կարող (խոսքը, իհարկե, վերաբերում է տեական ու ամուր հաղթանակին) առանց հաստատուն թիկունքի : Թիկունքը ուղղամահակատի համար— առաջին դործն է, քանի վոր նա, և միայն նա յև մատակարարում ուղղամահակատին վոչ միայն հայթալիթման բոլոր տեսակները, այլ նաև մար-դիկ— մարտիկներ, տրամադրություններ և իդեաներ : Անկայուն, առավել ևս թշնամական թիկունքը ամենալավ, ամենաամրակուռ բանակն անպայման կվերածի անկայուն և փխրուն մասսայի» (Ստալին) :

Այդ պատճառով պատերազմող կողմերը ձգտում են ամեն կերպ խախտել հակառակորդի թիկունքի կայունությունն ու նորմալ աշխատանքը : Ժամանակակից պատերազմներում դրա համար հիմնական մարտական միջոց է հանդիսանում ուժբակո-ծող ավիացիան :

Իմբակոծող ավիացիան եյտական կորուստներ կարող է պատ-ճառել վերդեանյա գորքերին և առանձնապես զդալի հարվածներ հասցնել աերոլորտներին, յերկաթուղային հանդույցներին ու կայարաններին, դործարաններին և թիկունքի մյուս որյեկտնե-րին : Միքանի յերկրներում ուժբակոծիչ ինքնաթիւները կազմում են ամբողջ ավիացիայի մոտ 50—60% : Բացի այդ, պետք է հաշ-մի առնել, վոր հետախուզական ինքնաթիւնները և կործանիչնե-րի ու նույնիսկ շտուրմավեկների միքանի տեսակներն ևս կարող են ուժբակոծելու խնդիրներ կատարել :

Զանազան տիպի ուժբակոծիչներ կան . թեթև, միջակ, ծա-նըր, մուտավոր և հեռավոր գործողության : Դրանք իրարեց տարբերում են իրենց ըեռնատարությամբ, զինվածությամբ, արագությամբ, թոփչիքի մաքսիմալ բարձրությամբ («առաստա-

լով»), դործողության շառավղով, այսինքն այն ամենամեծ տարածությամբ, վոր նրանք կարող են թուչել, պահպանելով յետ վերադառնալու համար անհրաժեշտ վառելանյութի պաշա-րը : Ամենամեծ «մարտական բեռը» կարող է վերցնել ծանր ուժբակոծիչը—մինչև 2 տոննա ուռւմք, իսկ միքանի ուժբակոծիչ-ներ կարող են նույնիսկ ավել վերցնել : Ծանր ուժբակոծիչների դործողության շառավղից 1000—1500 կիլոմետր և, արագությու-նը ժամում՝ 320—400 կիլոմետր, «առաստաղը»՝ 8000-ական մետր, իսկ միքանիսինն ավելի բարձր : Սկսում են ամենից շառ տարածվել բարձրացված մինչև 450—500 կիլոմետր և ավելի մեկ ժամում արագությամբ ուժբակոծիչները : Դրանք գերազան-ցապես յերկու կամ յերեք մուտուրանի, մինչև մեկ տոննա ուռւմ-քի բեռնատարությամբ և մոտ 1000 կիլոմետր դործողության շառավղով ինքնաթիւններ են :

Անհրաժեշտ է հաշվի առնել, վոր ավիացիայի մարտական հատկությունների բոլոր ցուցանիշներն անընդհատ փոփոխվում են արագության հետագա ավելացման, «առաստաղի», դործողու-թյան շառավղի և այլնի ավելացման ուղղությամբ :

Ժամանակակից ուժբակոծող ավիացիան չնջում է ուղղամա-կատի և թիկունքի միջև յեղած սահմանները : Դա նշանակում է, վոր ողային հարձակումները խոր թիկունքի վրա, քաղաքա-ցիական ազգաբնակչության բազմամիլիոն մասսաներին դարձ-նում են պատերազմի ամենիջական մասնակիցներ :

Այդ մասսաների կայունությունը, կազմակերպվածությունն ու նախապատրաստվածությունը ողային հարձակման պայման-ներում վիթխարի նշանակություն ունի յերկրի պաշտպանունա-կության համար :

Մեր Կարմիր Բանակի թիկունքի կայունությունն ապահով-վում է ամբողջ խորհրդային ժողովրդի բարոյական-քաղաքական միասնությամբ : Իսկ հակառակորդի ավիացիայի դեմ պայքա-րելու, նրա ինքնաթիւնները վոչնչացնելու համար մենք ունենք հզոր կործանիչ ավիացիա, զենիթթային հրետանի և այլ միջոց-ներ : Վորաբեսզի մեր հայրենիքն ու մեր ժողովրդին ողային ա-վտզակների հարձակումներից ել ավելի վստահելի պաշտպա-նենք, անհրաժեշտ է ել ավելի ուժգին ամրացնել յերկրի հակա-ռագին պաշտպանությունը, ել ավելի լավ գնել ժողովրդի հա-կառողային և հակաքիմիական պաշտպանության դործը (ՀՈՔՊ-ը) :

Մեր ամբողջ ժողովուրդը պետք է կազմակերպված ու պատրաստված լինի ակտիվորեն դիմավորելու և յետ շպրտելու ողային թշնամուն, վորպեսզի թիկունքի անխափան աշխատանքը չակառակորդի ողային հարձակումների պայմաններում վիովին ապահովված լինի:

Կազմակերպել հասպակական ոգնություն պեսության՝ քիլունքի հակառակային պաշտպանության գործում, ապահովել աշխատավորների միջնական մասամերի պատրաստումն ինքնապաշտպանության— սա յէ Պաջալիաֆիմի հիմնական խնդիրը ՀՈԲՊ-ի ասպարեգում:

Բնակչության ինքնապաշտպանություն նշանակում է յուրաքանչյուր տան, յուրաքանչյուր վտղոցի մշտական պատրաստականությունը ողային թշնամուց պաշտպանվելու համար: Յուրաքանչյուր աշխատավոր պետք է ճիշտ լիմանա իր տեղն ու իր պարտականությունները ողային հարձակման պայմաններում, սկսած է կարողանա ինքնապաշտպանության միջոցներ ձեռք առնել և իր բնակարանում, իր տանը ՀՈԲՊ-ի գծով կոլեկտիվ աշխատանքի կարդապահ մասնակիցը լինի: Բնակություն ու ծառայուները ձեռնարկություններում և հիմնարկություններում խելացի ինքնապաշտպանության հիման վրա պետք է աջակցեն իրենց հիմնարկի, իրենց Փարբեկայի, իրենց գործարանի աշխատանքի անընդհատությունն ողաքիմիական վտանգի պայմաններում ապահովելու գործին: Ինքնապաշտպանության կազմակերպության հիմնարկություններում, հիմնարկներում, դպրոցներում, ձեռնարկություններում կազմակերպող հատուկ կերպով սովորած խմբակներն ու զորախմբելը:

Պաջալիաքիմի խնդիրները բնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում հանդիսանում են՝ առաջին հերթին բացառական աշխատանքն ու աշխատավորներին «Պատրաստ եմ ՀՈԲՊ-ի համար» նորմաները համձնելուն նախապատրաստելը: Այդ նախապատրաստման նպատակն է— ապահովել ամբողջ աղղաբնակչության գրագիտությունը ողային թշնամուց պաշտպանվելու խնդիրներում: Պատրաստումն անց է կացվում Պաջալիաքիմի խմբակներում: Դա պետք է տա գիտելիքների և դուռքի այն մինիմումը, վորն անհրաժեշտ է աշխատավորին հաջող ինքնապաշտպանության համար: Նորմաները հանձնողին

արվում ե «Պատրաստ եմ ՀՈԲՊ-ի համար» 1-ին աստիճանի նշանը:

ՀՈԲՊ-ի նշանակիրները պետք է կազմեն ինքնապաշտպանության խմբակների հիմնական կմախքը: Հասարակական ողնությունն այդ խմբերի կազմակերպմանն ու նրանց պատրաստումը Պաջալիաքիմի կարեռագույն խնդիրներից մեկն է:

ՀՈԲՊ-ի գծով ամբողջ մասսայական աշխատանքը տանելու համար անհրաժեշտ է հրահանդչական կազմ: Պաջալիաքիմը պատրաստում է ՀՈԲՊ-ի հրահանդիչներ, դրա համար վարժակայաններում կազմակերպելով հատուկ դասընթացներ: Պաջալիաքիմի կենտրոնական Խորհուրդը սահմանել է «Պատրաստ եմ ՀՈԲՊ-ի համար» 2-րդ աստիճանի նշանի նորմաները, վորպիսիների հանձնումն հրահանդչական աշխատանք տանելու իրավունք և տալիս:

Բնակչության մեջ ՀՈԲՊ-ի համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների (հակագաղեր և այլն) տարածմանն ոժանդակելը ևս հանդիսանում է Պաջալիաքիմի խնդիրը: Մշակվում են այդ միջոցների որինակները, վորոնք ավելի պիտանի յեն բնակչության կիրառման համար, կազմակերպվում է հակագաղերի սարքին լինելու ստուգում, դրանց վերանորոգումը և այլն:

Վերջապես, Պաջալիաքիմի առջև ամբողջապես դրված են ողային թշնամու դեմ ակտիվ պայքարելու գործն ապահովելու խնդիրները: Ավելացիան զենիթային հրանոթների ու գնդացիրների հետ միասին հանդիսանում է հակառակային պաշտպանության ամենաներգործոն միջոցը: Զարգացնելով Խորհրդային նախատրմիղը, զենիթային հրետանին, Խորհրդային Միության աշխատավորներն ամրապնդում են յերկը հակառակային պաշտպանության հիմքը: Պաջալիաքիմը ցույց է տվել և պետք է ցույց տա Խորհրդային պետության ել ավելի մեծ չափերով հասարակական ողնություն ՀՈՊ-ի այդ հիմք ուժեղացնելու և ամրապնդելու գործում:

Այդ ամբողջ աշխատանքում, վոչ պակաս քան մեր սոցիալիստական շինարարության մյուս տեղամասերում, անհրաժեշտ է աննկուն զգոնություն:

Մեր սոցիալիստական հայրենիքը շարունակում է մնալ կապիտալիստական շրջապատման մեջ և թշնամիները կաշխատեն

ներսից կաղմալուծել մեր թիկունքի կայունությունը։ Հենց սաղմային վիճակում արմատախիլ անել այդ նենդ մտադրությունները— այսպիսի խնդրի մասին պետք ե միշտ հիշել նաև չՈՒՊ-ի ասպարեզում աշխատելու ժամանակ։

ԲԵՄԱ 2

ՈԴԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞նչ միջոցներ ե գործադրում ավիացիան թիկունքի վրա կատարած հարձակումների ժամանակ։ Ողային թշնամուց հաջողությամբ պաշտպանվելու համար պետք ե լավ իմանալ, թե թշնամին հարձակման ինչպիսի միջոցներ կարող ե գործադրել և ինչպես են այդ միջոցները ներդործում։ Անհրաժեշտ ե հաշվի առնել, վորովային հարձակման միջոցներն ուժեղ կերպով զարդարում են, ուստի հարկավոր ե ուշադրությամբ հետեւյլ այդ զարդարմանը և աստիճանաբար կատարելագործել իր սլաշտպանությունը։


Թիկունքի վրա հարձակվելու համար ժամանակակից ավիացիան ողովում ե զանազան տեսակ ավիացիոն ուումբերով և հատուկ գործիքներով, վորոնցով շաղ են տրվում (ցրվում են) հատուկ մարտական նյութեր։ Խսպանիայում ու Չինաստանում մղվող պատերազմի փորձը ցույց ե տալիս, վոր քաղաքների վրա կատարվող հարձակման հիմնական միջոցներն են առայժմ ֆուլասային և հրդեհիչ ավիաուումբերը։ Ֆուզասային ավիաուումբերը լցում են ուժեղ ներդործող պայթուցիկ նյութերով, իսկ հրդեհիչ ավիաուումբերը՝ հրդեհ առաջացնող հատուկ բարդագություններով։

Հարեւստանի դեմ վարած պատերազմի ժամանակ իտալական ավիացիան լայն կերպով ողովում էր նաև քիմիական (թունավոր նյութեր պարունակող) ավիաուումբերով և, բացի այդ, թև շաղ եր տալիս հատուկ գործիքներով։ Հայտնի յե, վոր քիմիական ավիաուումբեր արդեն գործադրում ե նաև յաղոնական ավիացիան։

Առաջիկա մեծ համաշխարհային պատերազմում թիկունքային կետերի վրա կատարվող ողային հարձակումների ժամա-

նակ այս բոլոր միջոցները, այն ե՝ ֆուզասային, իրդեհիչ և ֆիմբիական, անշուշտ գործադրություն յեն ամենալայն չափերով։

Ֆուզասային ավիասումբերը նախատեսվում են չենքերն ու կառուցումներն ավերելու, ինչպես և բնակչությունը վոչնչացնելու համար։ Միքանի դեպքերում ֆուզասային ուումբերի հետ միասին գործադրովում են բեկորավոր ավիաուումբեր, վորոնք մարդկանց հարվածում են բեկորներով։



Նկ. 1. Զանազան քաշ ունեցող ամենքիւական ավիացիոն ուումբեր, վորոնք կօսում են 10-ից մինչև 1.800 կիլոգրամ։ Կերեւում ցույց է տրված ֆուզասային ավիաուումբերի հատածը (ձախից) և բեկորավոր ավիաուումբերի հատածը (աջից)։ Ստարիլիվատորը ուումբին ողովում վայր ընկնելու ժամանակ կայուն նություն և հաղորդում։

Հրդեհիչ ավիաուումբերը քաղաքներին սովանառում են մասսայական հրդեհներով։ Քիմիական միջոցները կարող են առաջ բերել մասսայական թունավորումներ։ բացի այդ, դրանք, տեղանքը թունավորելով, դժվարացնում են հրդեհների գեմ պայքարելը և ֆուզասային ավիաուումբերի պատճառած ավերածությունների վերացնելը։

Աղային հարձակման զանազան յեղանակները պահանջում են պաշտպանության զանազան միջոցներ։ Հետեւաբար, հարկավոր է իմանալ ֆուզասային, բեկորավոր, հրդեհիչ և քիմիական հիմնական միջոցների ներգործության բնույթը, վորակողի այդ միջոցներն իրարից տարրերել և հմտորեն դորժադրել պաշտպանության անհրաժեշտ միջոցները։

Փուլասային յեկ բեկորային միջոցների ներգործությունը

Փուլասային ալիսառումքն այնքան ավելի ուժեղ և ներգործում, վորքան ավելի շատ պայմանական կան նրա մեջ, այսինքն՝ վորքան ավելի յենքա քաշը։ Խսպանական ու չինական քաղաքների վրա իմպերիալիստական ամբակոծիչների կատարած հարձակումների ժամանակ ամենից ավելի հաճախ դորժադրել են 50 մինչև 250 կիլոդրամ քաշ ունեցող ֆուլասային ավիաումբեր։ Սունձին դեպքերում կարող են գործադրվել նաև ավելի ծանր փուլասային ավիաումբեր (նկ. 1)։

Ավիաումբերը պայմում են նրանց մեջ յեղած հատուկ մեխանիզմի՝ պայմուցիչի ազդեցությամբ։ Փուլասային ավիաումբերի պայմուցիչը, սովորաբար, լինում է դանդաղ դորժության, այսինքն՝ ավիաումբը պայմենում է միայն այն ժամանակ, յերբ այդ ուստիքը խրվում է շենքի կամ հողի մեջ։ Ֆուլասային ավիաումբերի միքանի տեսակներն ունեն հատուկ կասեցնողներ (դանկարգացուցիչներ), վորոնց առկայության դեպքում ուստիքը պայմում է վայր ընկնելուց զգալի ժամանակ անցնելուց հետո։

Ֆուլասային ավիաումբի պայմունը ուղեկցվում է հղոր խլացուցիչ ձայնով։ Ֆուլասային ավիաումբը, դիմելով շենքին, ծակում է միջարկային մի շարք ծածկեր և, ներսում պայմելով, առաջ է բերում մեծ ավելածություններ։ պատերը, կտուրը փլչում են, բեկորները դես ու դեն են թուզում և այլն։ Յեթե ֆուլասային ուստիքն ընկնում է գետնի վրա, ապա նրա պայման տեղում դրյանում է խոր իրու, այսպես կոչված՝ ճառար։ Դեպի վեր և գետ ու դեն են թուզում ահագին քանակությամբ հող, քարեր, փոշի։

Ֆուլասային ավիաումբի պայմունի ժամանակ դոյանում է ողային հարվածական («պայման») ալիք, վորը չու-

փաղանց մեծ արագության հետևանքով հսկայական ուժ ունի։ Հարվածական ողային ալիքը կարող է ավերել պատերը և սպանել մարդկանց պայման վայրից զգալի հետավորության վրա։ 50—250 կիլոդրամանոց ավիաումբերի համար այդ տարածությունը հավասար է 10—20 մետրի, 1000 կիլոդրամանոց ավիաումբի համար՝ մոտ 40 մետրի։

Մուտավորապես յերկու անգամ ավելի մեծ տարածության վրա պայմունի հարվածական ողային ալիքը ծանր կոնտուպիտ յե պատճառում մարդկանց, պատերի մեջ առաջ և բերում պղալի չեղքեր և կառուցվածքների վնասվածքներ։

Մուտավորապես չորս անգամ ավելի մեծ տարածությունների վրա (այսինքն 40—80 և 150—160 մետր) պատճառաների բոլոր ապակիները զուրս են թռչում։ Մուտավորապես այդ նույն տարածության վրա ել պահպանում են սպանելու բրենց ուժը (այսինքն՝ մարդկանց սպանելու կամ վիրավորելու ընդունակությունը) ֆուլասային ավիաումբերի պայմունի ժամանակ դեռ ու դեն թռչող բեկորները։

Բեկորներ շատ չեն ստացվում, նրանք խոշոր են, ուժեղ չափով շիկացած և գյուրավառ նյութերի ու շինությունների գիպչելիս կարող են հրդեհներ առաջացնել։ Հրդեհ կարող է առաջնական հանակ, հենց իր՝ ֆուլասային ավիաումբի անկման վայ-

բեկորավոր ավիաումբի պայմունի ժամանակ ստացվում է համեմատաբար մանր բեկորների մեծ քանակություն, վորոնք գես ու դեն են թռչում յերկրի մակերեսի վրայով բարակ վորնացող ձայնով։ Պայմունի վայրի վրա բարձրանում է ծիփի մի փոքր քուլա։ Սյատեղ ձագար չի գոյանում, վորովհետեւ բեկորավոր ավիաումբը սովորաբար ունենում է վայրկենական դորժության չափազանց զգայուն պայմանիչ, վորը վայր ընկնող ուստիքը պայմենում է անհապաղ՝ վորեւ խոչընդոտի հետ շփություն։ Բեկորները հրդեհից ներգործություն չունեն։ Իրենց հարվածող ուժը նրանք պահպանում են պայման վայրից 50—200 և ավելի մետր տարածության վրա։ Բեկորավոր ավիաումբերի քաշը հասնում է 8—10 կիլոդրամից մինչև 50 կիլոդրամի։

Քաղաքների վրա կատարվող հարձակումների ժամանակ,

Հինգես յերեւմ ե, բեկորավոր ավիառումբերը համեմատարար հաղպաղեալ են դործագրվելու, վորովհետև նրանք աղյուսէ և հաստ փայտե սովորական սատերը չեն ծակում:

Պետք ե սպասել, վոր բեկորավոր ավիառումբերի միքանի տեսակները կարունակեն վոչ մեծ քանակությամբ թունավոր նյութեր: Նման ավիառումբերը սովորաբար կոչվում են բեկորավոր-քիմիական:

Բեկորավոր-քիմիական ավիառումբերը պայթելիս, բացի բեկորները, գոյանում ե թունավոր ծխի վոչ մեծ ամոլ, վորը դրվուի կերպով և աղյուս շնչառության ուղիների և աչքերի վրա:

Հրդեհի միջոցների ներգործությունը

Հրդեհի ավիառումբերի պայթյունները կարող են ուղեկցվել զանազան յերեսութներով, նայած թե ինչ բաղադրությամբ ե լցված այս կամ այն ուսմբը և ինչպես և նա դործի գրվում:

Հրդեհի ամենագործածական բաղադրություններից մեկն ե «աերմիտը», փոշիացած ալյումինի և յերկաթոքսիդի այդ խառնուրգը: Այս խառնուրդն այրվելիս ստացվում ե շատ բարձր ջերմաստիճան, վորը հասնում ե 3000°-ի. այս ջերմաստիճանի ժամանակ հալվում և այրվում է յերկաթը:

Տերմիտի հետ միաժամանակ կարող է գործադրվել «ելեկտրոնը»— մագնետիոնի ու ալյումինի և միքանի այլ մետաղների հատուկ ձուլվածք: Այրվող ելեկտրոնի ջերմաստիճանը հասնում է մինչև 3500°-ի: Հայտնի յեն այսպես կոչված ելեկտրոնատերմիտային ավիառումբերը. այդ ուսմբերի պարուտակը (օбоլուչկա) պատրաստված ե ելեկտրոնից, իսկ լիցքը՝ տերմիտից:

Բացի տերմիտն ու ելեկտրոնը, կան մի շարք այլ նյութեր ու բաղադրություններ, վորոնք կիրառվում են հրդեհի ավիառումբերի մեջ (յերեմն տերմիտի ու ելեկտրոնի հետ խառը), որինակ՝ կարծր հանքային յուղերը, զանազան այրվող հեղուկները, դեղին լուսածինը (ֆոսֆորը) և այլն: Լուսածինն ու միքանի այրվող հեղուկները բաց ոդում ինքնարոցավառվում են:

Իրենց կառուցվածքով և ներդործության բնույթով հրդեհի ավիառումբերը բաժանվում են յերկու հիմնական խմբերի՝



ցրող գործողության և կենտրոնացված գործողության ոռումբեր: Ցրող գործողության ոռումբը պայթելիս հրդեհի բաղադրությունը ցրվում է հեռուն դեպի ամեն կողմ և առաջ և բերում հրդեհի բաղմաթիվ մանր ողախներ: Այդպիսի ոռումբերը ծառայում են դլամավաղես դյուրավառ նյութեր պարունակող պահեստները, փայտե շենքերը, անտառները (չորային յեղանակին) և այլն բոցավառելու համար: Այս ոռումբերը սովորաբար ունեն հատուկ դիտանցիոն (հիուակայական) մեխանիզմներ, վորոնք այդ ոռումբերը պայթեցնում են սուրում յերկրից նախորոք վորոշված համարության վրա:

Կենտրոնական գործողության ոռումբերը հրդեհի ոջախ են ըստեղծում միայն իրենց պայթյունի վայրում և անմիջապես և անմիջապես

այդ վայրի մոտերքը, բայց այդ ոջախը լինում ե զգալիորեն ավելի խոշոր: Այդպիսի ոռումբերը դործադրվում են Փարբիկաների ու դործարանների, յերկաթուղային կառուցվածքների և այլնի վրա հարձակվելիս:

Դիպչերով շենքին, ոռումբերը սովորաբար ծակում են կտորը և չերդակում (թալանում) հրդեհ են առաջացնում (նկ. 2): Առանձին ոռումբեր, նայած իրենց քաշին ու նետման բարձրությանը, կարող են ծակել նաև չերդակների ծածկույթները, իսկ վորոշ դեղաքերում թափանցել նույնիսկ ավելի ցած (մանալանդ շատ պինդ դիմամաս ունեցող ոռումբերը):

Տերմիտային կամ ելեկտրոնա-տերմիտային կենտրոնացված գործողության ոռումբն ընկնելուց 20—40 վայրկյան անց տերմի-



Նկ. 2. Հրդեհի ավիառումբ:

Վերևում՝ թռչելիս, ներքեւում՝ ոռումբի ներդործությանը:

այդ վայրի մոտերքը, բայց այդ ոջախը լինում ե զգալիորեն ավելի խոշոր: Այդպիսի ոռումբերը դործադրվում են Փարբիկաների ու դործարանների, յերկաթուղային կառուցվածքների և այլնի վրա հարձակվելիս:

Դիպչերով շենքին, ոռումբերը սովորաբար ծակում են կտորը և չերդակում (թալանում) հրդեհ են առաջացնում (նկ. 2): Առանձին ոռումբեր, նայած իրենց քաշին ու նետման բարձրությանը, կարող են ծակել նաև չերդակների ծածկույթները, իսկ վորոշ դեղաքերում թափանցել նույնիսկ ավելի ցած (մանալանդ շատ պինդ դիմամաս ունեցող ոռումբերը):

Տերմիտային կամ ելեկտրոնա-տերմիտային կենտրոնացված գործողության ոռումբն ընկնելուց 20—40 վայրկյան անց տերմի-

տային մասսան սկսում և հալվել ու դուրս նետվել պարուտակի ձեզքերից ու այրված տեղերից : Յեթե պարուտակը ելեկտրոնային ե, ապա այն ևս հալվում և այրվում է, ուժեղացնելով տերմիտի հրդեհիչ ներդործությունը :

Տերմիտային ավիառումբը վառվում և գեղնավուն յերանդի վառ բոցով . այրվելն ընկերակցվում և թույլ ծխի փոքր քանակություն արտադրելով ; Ելեկտրոնա-տերմիտային ավիառումբի այրման ժամանակ սկզբում դիտվում և նույն բանը (այրվում և տերմիտը), իսկ ապա յերեան և գալիս բաց-կապտավուն բոց, և արտադրվում և սպիտակ ծանր ծուխ, վորը այրման ամբողջ վայրը ծածկում և սպիտակ փառով (այրվում և ելեկտրոնը) :

Փոքրիկ տերմիտային կամ ելեկտրոնա-տերմիտային ավիառումբի այրումը տեսում է 3—5 քոպե : Այդ ժամանակի ընթացքում կարող են բոցավառվել նույնիսկ դժվար այրվող առարկաներն ու նյութերը : Հարված տերմիտն ու ելեկտրոնը կարող են այրելով ծակել առաստաղի ծածկույթը, թափանցել առորեգանվող շնությունները և այնտեղ ստեղծել հրդեհի նոր ոջախ :

Հրդեհիչ ավիառումբերի քաշը տարրեր և լինում, բայց վոչ ավելի, քան միքանի տասնյակ կիլոգրամ : Փոքր քաշ ունեցող ոռումբերը ճենառու յեն նրանով, վոր մի ոմբակոծիչը կարող և բարձրացնել ահազին քանակությամբ այդպիսի ոռումբերը : Դրա վտարեն, համեմատարար խոչըր ոռումբերը թույլ են տալիս ստեղծել հրդեհի շատ հզոր ոջախներ :

Հրդեհիչ ամենափոքր ոռումբերը կարող են մեծ քանակությամբ տեղափոքել ինքնաթիւնների տակ ամրացվող հատուկ պահեստարաններում : Պետք յեղած բոպեյին պահեստարանը բաց են անում, և ոռումբերը դուրս են թափվում, տարածվելով մեծ մակարդակի վրա : Ինքնաթիւնները կարող են նաև հատուկ դորձիքներից դուրս նետել (թափել) այրվող հեղուկներ : Որինակ այդպիսի յեղանակ եր գործադրում իտալական ավիացիան Հարեշտանում և յապոնական ավիացիան՝ Զինաստանում :

Թիմիական միջոցների ներգործությունը

Ինչպես արդեն մատնանշվել ե, ողային հարձակման քիմիական միջոցների ներդործությունը կայանում և չպաշտպանված մարդկանց ու կենդանիներին թունավոր նյութերով թունավոր

լու և տեղանքը վարակելու մեջ : Ավիացիան թն գործադրում և ավիառումբերի և հատուկ գործիքների միջոցով :

Քիմիական ավիառումբերի մեջ թն գտնվում են հեղուկ կամ ողինդ վիճակում : Ուսումբերը պայմենավոր թն խառնվում են կամ ողինդ վիճակում : Ուսումբերը գոլորշու (գաղի), ծխի կամ մառախուղի, կամ շաղ են արվում տեղանքում և հետզհետե դուրշիանում են : Հատուկ գործիքներով շաղ տալու (թափելու) ժամանակ թն մեծ մասն ընկնում և գետնի վրա մանր կաթել-ների ձևով :

Այն թն, վորնք մարտական գործադրության ժամանակ լիովին խառնվում են ողինդ հետ և համեմատարար արագորեն ցրվում են, կոչվում են անկայուն թն : Այն թունավոր նյութեցը, վորոնք դանդաղ կերպով են դուրշիանում, յերկար ժամացը, վորոնք պահպանում են իրենց մարտական հատկությունները տեղանքում, կոչվում են կայուն թն :

Կայուն թն լայն կերպով գործադրվում են տեղանքը վարակելու համար : Այսպիսի թն-ով վարակված տեղանքն ու զանազան առարկաները դաւանում են չպաշտպանված մարդկանց ու կենդանիներին վնասելու աղբյուր :

Մարդու որդանիզմի վրա ունեցած ներդործության բնույթը թունավոր նյութերը սովորաբաժանվում են թունավոր նյութերը համբիչ հեղձուցիչ թն, գրգռիչ թն, մաշկի վրա ներդործող թն և ընդհանուր թունավոր նյութեր :

Հեղձուցիչ թն ներդործում են դերազանցապես չնչառության որգանների վրա, ծանր դեմքերում առաջ բերելով թոքերի բորբոքում և ուռուցք :

Գրգռիչ թն առաջացնում են քթի, քթի խոռոչի, ինչպես և կոկորդի ու չնչափողի խողովակների խիստ գրգռվածություն : Միքանի թն դրվում են առավելապես աչքերը, առաջ բերելով արտասուզ : Այսպիսի թն հաճախ կոչվում են արտավարեր :

Մաշկի վրա ներգործող թն վնասում են մաշկը և միաժամանակ ուժեղ կերպով ներդործում են աչքերի և չնչառության որգանների վրա :

Վերջապես ընդհանուր քանակով նյութերը, չնչառության ուղիների միջոցներով թափանցելով արյան մեջ, թունավորում են մարդու ամբողջ որդանիզմը :

Թվարկված անունները մատնանշում են այս կամ այն խմբին գերաբերող թունավոր նյութերի ներդործության միայն բնորոշ առանձնահատկությունները: Անհրաժեշտ է հիշել, վոր շատ թշնամունակ են առաջ բերել շատ բազմազան աղղեցություն (ներդործության ինչպես ուժի, այնպես ել բնույթի տեսակետից), և այսպահանակին, վորի ընթացքում ներդործել է թշնամունիցին մեջ ընկած թշնամակին, թշն «մարտական վիճակին» (գաղ, գոլորշի, ծուխ, մասախուղ, վիթեր) և մի շարք այլ պատճառների: Բացի այդ, միքանի թշն իրենց բուն իսկ բնույթի չնորհիվ ընդունակ են տարբեր ներդործություն անելու: Այսպես, որինակ, մաշկի վրա ներդործող հիմնական թշն (լավիտ, լյուիզիտ), աղղելով մարդու մաշկի վրա, միաժամանակ վոչ միայն ներդործում են չնչառության որդանների ու աչքերի վրա, այլև, արյան մեջ թափանցելով, ընդունակ են առաջ բերելու ընդհանուր թունավորում:

Թշն ներդործությունը մաշկի վրա ոկղբում արտահայտվում է մաշկի վնասված մասի կարմրելով, յերբեմն քոր գալով և այրուցքով: Շատ թեթև դեպքերում վնասվելը գործ ել սահմանափակվում է: Ամենի ծանր դեպքերում մաշկի վրա գոյանում են բարիկներ և ապա խոցեր, վորոնք պահանջում են յերկարատե բուժում: Յեթե վնասված են մաշկի մեծ տարածություններ, կարող են մահ առաջանալ:

Մաշկի վրա ներդործող թշն կաշին առանձնապես ուժեղ կերպով են վնասում, յերբ ընկնում են նրա վրա զեղուկ ձեռք: Այս թշն գոլորշիներից մաշկի վնասվածքներ կարող են լինել այն դեպքում, յերբ գոլորշիները ներդործել են մաշկի վրա յերկար ժամանակ, մանավանդ ամառվա շող ժամանակը:

Յերբ մաշկի վրա ներդործող թունավոր նյութերը վնասում են չնչառության որդանները, յերեան և զալիս ձայնի խոսկություն և չոր հաղ: Ծանր դեպքերում կարող են զարդանալ տություն և չոր հաղ: Ծանր դեպքերում կարող են կոկորդում, թոթարախային-բորբոքիչ որոցեները բերանում, կոկորդում, թոթերում և հասցնել մահվան:

Աչքերի վրա ներդործելը սկզբում արտահայտվում է կոռերի կարմրությամբ ու ուսուցքով, աչքերում ոտարոտի մարմնի («ավագի») զգացումով, լուսավախությամբ. ապա աչքերից ակսում է լորձունք ու թարախ հոսել, կոռերն ու աչքերի յեղթեկում է լորձունք ու թարախ հոսել, կոռերն ու աչքերի յեղթեկում:

Քաթաղանթները խոցուվում են: Առանձնապես ծանր դեպքերում աչքերը կարող են կուրանալ:

Յեթե մաշկի վրա ներդործող թշն իրենց վարակած կերակրեա և ջրի հետ միասին թափանցում են մարսողության որգանները, ստամոքսում զգացվում է ցավ, առաջ և գալիս փսխոց, յերբեմն լուծ: Ծանր դեպքերում մարսողության որգանների թարախսակալումն ու խոցումը կարող են մահ առաջացնել:

Մաշկի վրա ներդործող թշն բնորոշ ներկայացուցիչներն են լովրիտը և լյուիզիտը:

Իպրիտը— յուղու մութ-դարչնազույն մի հեղուկ է. հոտը հիշեցնում է սխառին ու մանանեխը. գոլորշին անդույն եք Մյուս թշն հետ համեմատած իպրիտն ամենամեծ կայունություն ունի. աեղանքում իպրիտն իր վնասելու հատկությունները պահում են ամառը մինչև 2, իսկ ձմեռը մինչև 3—5 և ավելի որով: Իպրիտի առանձնահատկությունը նրա ներդործման դանդաղությունն է: Իպրիտից վնասվածը սկզբում վոչ մի հիվանդագին զգացում չի ունենում. մաշկի վրա ներդործող թշն համար տիպիկ վնասվածքի առաջնին նշանները յերեան են գալիս միայն միքանի ժամ անց:

Իպրիտի կաթիլները, ընկնելով մարդու մաշկի վրա, արագորեն լուծվում են մաշկի ճարպային ծածկույթի մեջ: Միքանի բոպե հետո մաշկի վրա իպրիտի վոչ մի հետք չի նկատվում. զգացվում է միայն նրա հոտը: 3—6 ժամ հետո մարմնի վնասված մասում յերեան և գալիս կարմրություն և սկսվում է այրուք ու քոր, իսկ 8—12 ժամ (յերբեմն և ավելի) հետո գոյանում են ջրակալած բջտիկներ: Հետզհետե բջտիկները ուռչում և մեծանում են, ցավը ուժեղանում է: Սովորաբար 3—5 որից հետո բջտիկները տրացնում են և նրանց տեղը զորով խոցեր (նկ. 3):

Լյուիզիտը— գարչնաղույն յուղու հեղուկ է, վորն ունի խիստ հոտ. այդ հոտը հիշեցնում է խորեննու տերենների հոտը. Լյուիզիտի գոլորշին, ինչպես և իպրիտինը, անդույն է: Լյուիզիտի կայունությունը մոտ յերկու անգամ պակաս է: Լյուիզիտից վնասված բուսականությունը վորոշ ժամանակ անց կարմիր-դարչնազույն յերանդ և լոնդունում:

Լյուիզիտի ներդործությունը մաշկի վրա, իպրիտի հետ

Համեմատած, ավելի շուտ ե արտահայտվում: Բնկնելով մաշկի վրա կաթիլների ձևով, լուսիդաբ արագ կերպով առաջ ե բերում այրուքի ու ցավի դղացում. առաջին 30 րոպեյի ընթացքում այսպիս վնասված մասում առաջ ե դալխա կարմրություն, ապա քում վնասված մասում առաջ ե դալխա կարմրություն, ապա դալխա վնասված մասում են բշտիկներ, վորոնք հետադայում փոխվում են խոր լոցյանում:

Բացի այդ, լուսիդաբ շատ արագ դրդում ե չնչառության վերին ուղիներն ու աչքերը և վորոնք չափով ունի դրդուիչ ներդորժության թն հատկություններ:

Թն գրգռիչ ներգործությունը արտահայտվում ե



Նկ. 3. Զեռքի վնասվելը խորհանում.

Ժամանակ յերկորդ որը, մեջտեղը՝ յերեք շաբաթ հետո, աջից յերկու ամեն ժամուն յերկորդ որը, մեջտեղը՝ յերեք շաբաթ հետո, աջից յերկու ամեն

քթի, քթի խոռոչի, չնչառության վերին ուղիների մյուս մասեթի, քթի խոռոչի, չնչառության վերին ուղիների մյուս մասեթի, քթի խոռոչով խիստ այրուքով, ճանկուելով և խոռոտուս ածելով. ըստ զդացվող խիստ այրուքով, ճանկուելով և խոռոտուս ածելով. համախ դիտվում ե անզուսալ փոշտոց (այստեղից ել ծագում ե քփոշտացնող թն անունը), քթից լորձունք հոսելը, քթում և քթի խոռոչում ցավ զդալը, սրանց ուռչելը, թուք հոսելը, կրծքի վանդակի ճնշվածություն զդալը, գլխացավ, կոկորդահազ, յերբեմն մղկտացնող ցավ ծնոտներում, չնչահեղձում, փախոց: Այս պիսի ներգործություն առաջացնող տիպիկ թն աղամսիսն ե: Այդ թն վնասում ե չնչառության վերին ուղիները, այնտեղ վախանցական վիճակում: Բացի այդ, ներգործում նաև աչքերի վրա:

Աղամսիսիտ— մուգ կանաչ դույնի փոշի կամ դեղնականաց չույնի կտորներ: Մարտական գործադրման ժամանակ աղամսիսիտ վերածվում ե թունավոր ծխի, վորն ունի մուգ գեղին կամ դարչնի գույն: Շնչառության վերին ուղիների գրդուման խիստ յերկույթներն սկսվում են աղամսիսիտի ծովսը ներշնչելիս արդեն առաջին-յերկրորդ րոպեյից: Այդ յերկույթները շարունակվում են 1—2 ժամ, իսկ յերբեմն ել ավելի, թունավորված մթնոլորտում 5—10 րոպե մնալուց հետո: Աղամսիսիտի յերկարատև ներդորժությունը կարող ե առաջ բերել որդանիզմի ընդհանուր թունավորում:

Ինչպես արդեն մատնանշվել ե, գրգռիչ համարվում են նաև այն թն, վորոնց ներգործությունը արտահայտվում ե առավելապես աչքերը գրգռելով (արտասվարեր թն):

Թն արտասվարեր ներգործությունը արտահայտվում է կոսկերում զդացվող այրուքով և ծակոցով, լուսավախությամբ, արտասվաթորությամբ, կոսկերի կարմրությամբ ու ուռչելով և աչքերը տկամա կկոցելով: Արտասվարեր ամենաուժեղ թն մեկը քլորացետոֆենոնն ե, վորը ազդում ե աչքերի վրա ինչպես ծխանման, այնպես ել գոլորշիանման վիճակում:

Քլորացետոֆենոնը սպիտակ դեղնավուն դույնի կարծք նյութ ե. մաքուր վիճակում դուրեկան հոտ ունի, վորը վորոշ չափով հիշեցնում ե մանուշակի հոտը: Արտասվարեր ներգործությունը շատ արագ ե արտահայտվում, յեթե ողը պարունակում է քլորացետոֆենոնի գոլորշու կամ ծխի ամենաանհան քանակ կություն իսկ: Ծուխը յերկնադույն սպիտակ ե: Գրգռիչ ազդեցությունը չնչառության ուղիների վրա շատ թույլ ե: Խոնավ, քրտնքու կաշվի վրա յերբեմն այրուցք և զդացվում:

Միքանի արտասվարեր թն, յեթե մեծ քանակությամբ և յերկար ժամանակով են ներգործում չնչառության գործարանների վրա, կարող են առաջացնել այնպիսի յերկույթներ, վորոնք բնորոշ են հեղձուցիչ թն համար: Որինակ, այդպիսի արտասվարեր թն ե քլորպիկրինը:

Քլորպիկրինը թափանցիկ դեղնավուն հեղուկ ե, վորն ունի սուր անախորժ հոտ: Գոլորշիներն անդույն են, առաջ են բերում խիստ արտասվաթորություն, սիրտնառնառ և հազ, յերեմն փսխոց:

ԹՆ ՀԵՂ ՃՈՒՅԻ ՆԵՐՊՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ արտահայտվում է հիվանդագին հազով, կրծքացավով, քթում և կոկորդում զգացվող այրուքով, չնչահեղձությամբ, ուժեղ թուլությամբ։ Ծանր թունավորման դեպքերում յերեան են դալիս տանջալից հազ՝ խռովոցի, սուլոցի և փրկիրախառն խուխի (յերեմն եւ արյունախառն) հետ միասին, խխտ հեռոց, խռապություն և ձայնի կորուստ, ձեռքերի ու վոտքերի կապտություն ու սառչում, դեմքի կապտախտային դույն։ Կարող ե զարդանալ թոքերի ուռուցվորություն, վորը կարող ե վերջանալ մահով։ Տիպիկ հեղձուցիչ թՆ են քըրը և ֆոսդենը։

Ֆոսդենը ողից 3½ անգամ ավելի ծանր մի դազ և (8º բարձր ջերմաստիճանի ժամանակ)։ Հոտը անախորժ է և հիշեցնում է փտած խոտը կամ փտած բանջարեղենը։ Ողի հետ խառը վիճակում կազմում է սպիտակավուն մի ամպ, մանավանդ, յեթե ողը խոնավ է։ Յերկար ժամանակ աննշան քանակությամբ աղցելու դեպքում ֆոսդենն սկզբում առաջ է բերում միայն վոչ մեծ հազ, թեթև սիրտխանոց, բերնում անախորժ համ։ յերբ թունավոր միջավայրից սուժածը դուրս է դալիս, այս յերեվութներն աստիճանաբար անհայտանում են և թունավորվածն իրեն զբում է քիչ թե շատ բավարար միքանի ժամվա ընթացքում։ Այնուհետև կարող ե զարդանալ ծանր թունավորում, յերեան են դալիս հեռոց, ծանր հազ և այլ յերեւութներ, վորոնք բնորոշ են հեղձուցիչ թՆ ներդործության համար։ Մեծ քանակությամբ Փոսդենի ներդործության դեպքում ծանր վնասվածքի նշանները կարող են վրա հասնել և յերեան դաշտապատճեն կերպով։

Ֆոսդենը կարող է առաջ բերել որդանիզմի նաև ընդհանուր թունավորում, բայց վոչ այնքան խխտ չափով, ինչպես լինում է ընդհանրապես թունավոր նյութերի ներդործության ժամանակ։

ԾՆ ԴԱՆՈՒՐ ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐԳՈՎ ծությունն արտահայտվում է զլիսապտույտով, հեղոցի, սրտի խփոցի, ընդհանուր թուլությամբ, սիրտխառնոցով, փրսխոցով, գլխացավով, գիտակցությունը վորոշ չափով մթաղնելով։ Ծանր դեպքերում դիտվում է դիտակցության կորուստ, չնչառության դադարում կամ սասաթիկ թուլացում, ջղաձզու-

թյուններ և կաթված, վորը համարյա վայրկենական մահ և պատճառում։

ԾՆ ԴԱՆՐԱՊԵՏ թունավոր այլպիսի խիստ ներգործություն ունեցող թՆ թափանցում են որդանիզմի մեջ չնչառության ուղղիների միջոցով և վնասում են նյարդային սխտեմը կամ արյունը։ Այդպիսի նյութերի թվին պատկանում են կապտաթթուն և ածխածնի ոքսիգը։

Կապտաթթուն անգույն, չատ ցնդուն հեղուկ է, վորի հոտը հիշեցնում է դառը նուշը։ Կապտաթթվի գոլորշիները ողից մի փոքր թեթև են, վորը դժվարացնում է նրա մարտական գործադրությունը։ Ողի մեջ համապատասխան չափով պարունակվելու դեպքում չափազանց ուժեղ, ընդհանուր թունավորիչ հատկություններ ունի։

Ածխածնի ոքսիգը անգույն և անհոտ դապ է, վորը ողից թեթև է։ Առորյա կյանքում այս դապը հայտնի յե շմոլքի (սգար) դապ անունով։ Այս վերջինն առաջանում է վառելիքը լրիվ չայրվելու հետևանքով, որինակ՝ ժամանակից չուտ փակված վառարաններում։ Ածխածնի ոքսիգով ընդհանուր թունավորումը կարող է վրա հասնել համարյա անհկատելի կերպով, սկսվելով գլխացավից։ Յեթև ողը պարունակում է մեծ քանակությամբ ածխածնի ոքսիգ, մահը կարող է առաջ դաշտապատճեն կորությունի ոքսիգ, ածխածնի վարող կարող է կուտակվել կյանքի համար վատանդավոր։

Վորապես թՆ ածխածնի ոքսիգը դեռ չի գործադրվել (ողից թեթև է, դժվարությամբ է հեղուկանում)։ Բայց հարկավոր է նկատի ունենալ, վոր այդ դապը կարող է կազմվել մեծ քանակությամբ պայմանական նյութերի այրվելուց։ Յեթև չենք ներսում պայմանական նյութուր Փուգացային ավիատումը, ասլա այնեղ այդ դապը կարող է կուտակվել կյանքի համար վատանդավոր քանակությում։

ԹՆ քննության առնվաճ բոլոր խմբերից առանձնապես մեծ նշանակություն ունեն մաշկի վրա ներգործող թՆ։ Այս թՆ պաշտպանվելով շատ բարդ է, վորովհետև հարկավոր է նրանցից պաշտպանել մարդու ամբողջ մարմինը, այնինչ այլ խմբերի պատկանող թՆ առաջ բերում միայն չնչառության ուղիներն ու աչքերը պաշտպանելու անհրաժեշտություն։ Բացի այդ, այս խմբին պատկանող հիմնական թՆ ունեն զգալի կայունություն, վոր պահանջում է չափազանց բարդ միջոցառումներ։

վարակված տեղանքը և զանազան վարակված առարկաներ անշնաս դարձնելու (գաղահանման) համար:

Գրդուիչ, հեղձուցիչ և ընդհանուր թունավոր նյութերը մեծ քանակությամբ հանկարծակի գործադրելու ժամանակ, կարող են ծանր կորուստներ պատճառել այն մարդկանց, վորոնք չեն կարողացել ժամանակին հազնել հակագաղեր կամ մտնել գողապաստարանները: Այս խմբերին պատկանող թիւ մեծ մասն անկայուն են: Բայց քաղաքում անկայուն թիւ կարող են բանել շատ մեծ տարածություններ, ընդամենքին այդ թիւ ողի հետ միասին թափանցում են նկուղային շենքերը, ներքեւ հարկերի սենյակները, լճանում են բակերում, բուլվարներում, նրբափողոցներում ու զանազան այլ, թույլ հողմահարվող տեղերում:

Քիմիական միջոցների նախաչելը: Թունավոր նյութերի հատկությունները և այդ նյութերը ավիացիայի կողմից դործագրելու պայմաններն իմանալն ողնում և ողային հարձակման քիմիական միջոցները ճանաչելուն:


Ֆուզասային ավիաումբերի հետ համեմատած ֆիմիական ավիաումբերի պայթյունի ձայնը զդալիորեն ավելի թույլ և, վորովհետեւ այդ ոռումբերի մեջ պայթուցիկ նյութերի քանակը մեծ մասամբ չառ քիչ է:

Պայթուցիկ նյութերը քիմիական ավիաումբի մեջ ծառայում են թիւ «արտական դրության», այսինքն գաղի (դոլորշու), ծիփ, մառախուղի կամ ամենամանր կաթիլների վերածելու համար, նայած դործադրվող թիւ և դործադրման նպատակին: Այս պատճառով քիմիական տարբեր ավիաումբերի մեջ հարկավոր ե պայթուցիկ նյութերի տարբեր քանակությունն, հետեւաբար և զանազան ոռումբերի պայթյունի ձայնն ել տարբեր կլինի: Նույնը պետք ե առել նաև ստացվող բեկորների քանակության մասին:

Սովորաբար քիմիական ավիաումբերից բեկորներ քիչ են ստացվում և այդ բեկորները ոռումբը պայթելու վայրից չառ հեռու չեն թուչում (նկ. 4): Բացառություն են կազմում կարծր թիւ պարունակող, մանավանդ բեկորային-քիմիական (տես 12 էջ) միջանի ոռումբեր, ինչպես և կայուն թիւ պարունակող հեռակայական ոռումբերը (տես ստորև):

Քիմիական ավիաումբի պայթյունի վայրում դորցած ձաղարը մեծ չե կամ այդպիսին բոլորովին չի դոյանում:

Յեթե հակառակորդը գործադրում ե քիմիական ավիաումբը, վորոնք նկատի յեն առնված միայն ողը թունավորելու համար, ապա զետնին դիպած ոռումբը պայթելիս անմիջապես գետնի վրա ստեղծվում ե թունավորված մթնոլորտ: Այդ մթնոլորտը հայտաբերվում ե այն հոտերով, վոր հատուկ ե դործագրված թիւ և շատ գեղեցիկում արտաքին տեսքով, — յուրահատուկ այն «ամպով», վոր դոյանում ե ողին դոլորշու (գաղի), ծիփ ու մառախուղի ձեռվ խառնված թիւ հետևանքով: Ամպը շտաբածվում» և շարժվում ե քամու ուղղությամբ, աստիճանաբար ցրվելով և ընդամենքին կորցնելով իր թունավորիչ հատկությունները: Յեթե քամի չկա և բացակայում են ողի վեր-բարձրացնելու համար:



Նկ. 4. Քիմիական ավիաումբի:

Վերևում՝ թռչելիս, ներքեւում՝ պայթելու մոմենտին:

բացող հոսանքները, ամպը կարող ե մնալ միենույն տեղանքում յերկար ժամանակի ընթացքում:

Յեթե քիմիական ավիաումբերը գործադրվում են տեղանքը վարակելու համար (բաղնական ոռումբեր, վորոնք պարունակում են կայուն թիւ և փոքր պայթուցիկ լիցք), ապա ոռումբը պայթելիս ամպը սովորաբար քիչ ե նկատելի և արագորեն չքանում է: Պայթյունի վայրից դեպի ամեն կողմ թուչում են թիւ ցալքունները, վորոնք վարակում են տեղանքը: Թիւ հայտներվում են վոչ միայն հոտով (իպրիտ, լյուիդիտ), այլև

մուլթ յուղու այն կաթիլներով (կամ սրանց հետքերով), վուրոնք ամենից ավելի նկատելի յեն սալահատակի, խոտի, թփերի, ձյունի վրա: Առանձնապես խիտ կերպով այդ կաթիլները տեղավորված են ձագարում, յերեմն այստեղ նկատելի յեն թն ամբողջ լճակներ: Տեղանքը վարակված է մուռմ մինչև թն լիովին գոլորշիանալը կամ հատուկ միջոցներով անվնաս դարձվելը: Թն գոլորշիները, խառնվելով ողին, նրա հետ միասին սարածվում են քամու ուղղությամբ և կարող են թունավորում առաջանել նույնիսկ վարակված տեղամասից բավական հեռու տարածության վրա:

Կայուն թն կարող են գործադրվել վոչ միայն բաղիսական, այլև դիստանցիոն ոռումքերի մեջ, վորոնք յերկրից վորոշ բարձրության վրա յեն պայթում: Այդպիսի ոռումքերը պայթելու ժամանակ դեպի բոլոր կողմերն են թուչում և ընկում, են դեսնի վրա բեկորներ, ողում կազմվում են մութ շերտեր, վորոնք բաղկացած են թն մանր կաթիլներից, վորոնք արագորեն ցած են նստում և քիչ թե շատ հավասարաչափ կերպով ծածկում են զղալի տարածություններ: Թն մի մասն ընդսմին վերածվում ե գոլորշու և մառախուղի:

Մոտավորապես նույնպիսի յերեւոյթներ (բացի բեկորները) կարելի յե դիտել հանուկ գործիքներից հեղուկ թն շաղ տալու ժամանակ, գործիքներ, վորոնք դանազան ծավալի ըրջահոս ձևի սեղերվուարներ են, վորոնք կախվում են ինքնաթիւի թևերի կամ Փյուզելամի տակ: Թն շաղ տալու ժամանակ ինքնաթիւի ողոչի յետեւը յերեւան են զալիս թն՝ միքանի վայրկայանի ընթացքում լավ նկատելի մութ շերտեր: Մեկ ոմբակոծիչն այսպիսի յեղանակով կարող ե ծածկել միքանի հեկտար տարածություն:

ԹԵՍԱ 3

ՀՈՊ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԽՄՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ի՞նչն ե կոչվում ՀՈՊ: Հակառացին պաշտպանություն (ՀՈՊ) կոչվում են հարձակվող ողային թշնամու դեմ պայքարելուն վերաբերող բոլոր միջոցառումները, այդ թշնամու կողմից գործադրվող հարձակման միջոցներից պաշտպանվելուն և հարձակման

հետևանքները վերացնելուն վերաբերող բոլոր միջոցառումները: Բնակչությունը ողային թշնամուց պաշտպանվելու համար նախապատրաստելու ժամանակ հաճախ այդ պաշտպանությունը կոչում են վոչ թե ՀՈՊ, այլ ՀՈԲՊ, այսինքն հակառացին և քիմիական պաշտպանություն: Դրանով ընդդժվում ե բնակչությունը ողային հարձակման քիմիական միջոցներից պաշտպանվելու անհրաժեշտությունը: Հակաքիմիական հմուտ պաշտպանությունը հսկայական չափով իջեցնում է քիմիական միջոցների նշանակությունը, այնինչ այս պաշտպանության թերությունները կարող են առաջ բերել մասսայական կորուստներ:

Հակաքիմիական պաշտպանությունն ընդդժելը, մի պաշտպանություն, վորը ողային թշնամուց պաշտպանվելու ժամանակ հանդիսանում է ՀՈՊ-ի մի մասը միայն, իհարկե, չի նշանակում, թե պաշտպանության մյուս բոլոր տեսակները (հակահրդեհային և այլն) կարող են ՀՈՊ-ի կաղմակերպման ժամանակ յերկրորդական համարվել:

ՀՈՊ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊ ՄԻՋՈՑԵՐԸ

ՀՈՊ-ի առաջին և ամենագլխավոր խնդիրն այն ե, վորպես զի թույլ չտալ կամ համենայն գելու դժվարացնել ողային թըշնամու կողմից հարձակում կատարելը: Ամենամեծ չափով այս ինդիբը կարող է իրադորձել մեր հզոր ավելացիան, վորը ընդունակ է ճնշել և վոչնչացնել հակառակորդի ողային ուժերը նրա աերոդրոմներում ու ավիացիոն բազաներում և ողային ժամաների ժամանակ հաղթանակ տանել:

Խոպանիայում մղվող պատերազմի փորձը ակնառու կերպով ապացուցեց վորպես ՀՈՊ-ի միջոց ծառայող ավիացիայի բացառիկ դերը: Հանրապետական Խոպանիայի ոմբակոծիչ ավիացիան բազմիցս ջախջախել է Փրանկիստական այն աերոդրոմները, վորոնցից հարձակումներ ելին կատարվում Մադրիդի վրա: Հանրապետական կործանիչ ինքնաթիւները պատուհաս դարձան Փրանկիստական ոմբակոծիչների համար, վորոնք վերջիվերջունույնիսկ դադարեցին հանրապետականների կործանիչների հետ ժարախի բանվելու, զերադաշտելով վախկոտ փախուստի դիմելու: Ունենալով դերադանց մաներայնություն, մեծ արագու-

թյուն, հզոր կրակ, փռքրիկ կործանիչ ինքնարդուք, ժամանակին ողային մարտի բոնվելով՝ կարող ե միքանի վայրկանում գցել և վոչնչացնել մեծ բազմատեղանի ոմբակոծիչը։ Ժամանակակից կործանիչի արագությունը մոտենում է 500 կիլոմետրին մի ժամում։ Կործանիչները զինված են, բացի 1—2 գնդացիրից, նաև 1—2 թնդանոթով կամ խոչոր տրամադիմ ունեցող գնդացիրներով։ Կան ինքնաթիւներ, վորոնք ունեն վինտի վուանի չիրայով կրակող թնդանոթ։

Հակառակորդի ավիացիայի դեմ պաշտպանվող տերիտորիայի վրա պայքարելիս կործանիչ ինքնաթիւների հետ միասին հսկայական նշանակույթուն ունեն զենիքային կրակային միջոցները՝ զենիթային թնդանոթները և զենիթային գնդացիրները։ Նըրանք դիպուկ կրակով վոչնչացնում են ոդային թշնամուն կամ քայլայում են նրա շարքերը, աջակցելով իրենց կործանիչ ինքնաթիւների մարտական աշխատանքին։ Վորպեսզի խուսափեն պարտությունից, հակառակորդի ոմբակոծիչներն ստիպված են բարձրանալ և հասնել այնպիսի բարձրության, վորտեղից նրանց ոռումքերը ճիշտ կերպով չեն կարող դիպչել նշված նշաններին։

Զենիքային քննանքները արտգորեն չուռ են տալիս փողը սետք յեղած կողմը մի լրիվ շրջան և համարյա ուղղաձիգ կերպով գեպի վեր։ Այլ թնդանոթներն ունեն մեծ արագածություն և կարող են հակառակորդի ինքնաթիւները հարվածել 6000—8000, իսկ միքանի հանովներ մինչև 10000 մետր և ավելի մեծ բարձրության վրա։

Զենիքային քննացիրները լրացնում են զենիթային հրետանու կրակը, ողային թշնամուն վոչնչացնելով մինչև 1500—2000 մետր բարձրության վրա։ Իջնող ինքնաթիւների դեմ հաջողությամբ կարելի յե կրակ բանալ ձեռքի գնդացիրներից և հրացաններից (մինչև 400—500 մետր բարձրության վրա)։

Գիշեր ժամանակ զենիթային կրակային միջոցների ու կործանիչ ինքնաթիւների՝ հակառակորդի ավիացիայի դեմ մղած պայքարը հեշտացնում են հզոր զենիքային լուսարձները։ Յերկինքը լուսավորելով, լուսարձակները հայտաբերում են հակառակորդի ինքնաթիւները և նրանց կուրացնում են։ Ժամանակակից լուսարձակների ձառագայթի ամենամեծ հեռավորությունը մոտ 10 կիլոմետր ե։

Ինքնաթիւները ճայնով հայտաբերելու համար գործադր-

վում են հատուկ գործիքներ— ձայնորսներ։ Գիշերը նրանք աշխատում են լուսարձակների հետ միասին, թույլ տալով լուսարձակի ճառագայթը ուղղել մոտեցող ինքնաթիւնի կողմը։

Ուղային հարձակումը, մանավանդ գիշեր ժամանակ և մասնակատ յեղանակին, թույլ չտալու համար հզոր միջոց են հանդիսանում խափանման աերաստաները։ Սրանք ողում պողպատե պարաներից կազմված մի պատվար են ստեղծում, վորին դիպչելով հակառակորդի ինքնաթիւները ջարդվում են։ Սրանից խուսափելու համար ողային թշնամին պետք է բարձրանա և հասնի մեծ բարձրության։

Վերջապես ողային հակառակորդի համար զգալի չափով կարելի յե գժվարացնել այն նշանների գտնելը, վորոնք նա մտադիր ե ոմբակոծել։ Այս նպատակով կիրառվում են հակառակին ֆողարկման միջոցներ, որինակ՝ պաշտպանվող կետերը ծածկում են ծխածածկությներով, սարքում են զանազան կեղծ չենքեր, վորոնք հակառակորդին մոլորության մեջ են դցում և այլն։ Գիշեր ժամանակ հսկայական նշանակություն ունի լուսավորքումը, այսինքն ամբողջ պաշտպանվող կետում լույսը մարելը կամ մթնացնելը։

Սակայն կարող են դեպքեր լինել, յերբ չնայած պայքարի ավելացների միջոցների դիմադրությանը և քողարկմանը, ոմբակոծիչների մի մասն այնուամենայնիվ կնետի իր «մարտական բեռը» նշված նշանների վրա։ Այս պատճառով չՈՊ-ի խընդիրն և կազմում նաև ողային հակառակորդի կողմից կիրառվող հարձակման միջոցներից պաշտպանելը և հարձակման բոլոր հետևանքները վերացնելը։

Բնակչությունը վնասվելուց պահպանելու հիմնական միջոցներ են ապաստարաններն ու զանազան քայլատունները, ինչպես և հակագագերը և անհատական հակաքմիական պաշտպանության միջանի ուրիշ միջոցներ (պաշտպանական հազուս և այլն)։

Հսկայական նշանակություն ունեն բժշկա-սանիտարական միջոցները, վորոնք ապահովում են ողային հարձակման ժամանակ բոլոր տուժածներին ժամանակին ողնություն ցույց տալը։

Հրդեհի վտանգը նվազեցնելու և հրդեհի ավելացումքերն ու ողային հարձակման ժամանակ ծաղող հրդեհները հանդցնե-

լու համար լայն կերպով դործադրվում էն հականդիհային միջնութերը :

Վերջապես գազահանման և վթարային-վերականգնողական միջոցները թույլ են տալիս վերացնել ողային հարձակման բռնուր մյուս հետեւանքները : Գազահանման միջոցները դործադրվում են տեղանքը և թունալոր նյութերով վարակված զանազան առարկաներ մաքրելու (անվնաս դարձնելու) համար : Ամեն անսակ ալերածություններ, վլվածքներ և նման բաներ վերացվում են վթարային-վերականգնողական միջոցներով :

Վորպեսղի կարելի լինի ժամանակին դործադրել ՀՈՊ-ի թվարկած բոլոր միջոցները, այսինքն ժամանակին ողային հակառակորդին ընդառաջ կործանիչ ավխացիա ուղարկելը, զենիթային կրակ բաց անելը, պաշտպանվող ամբողջ կետում լույսը մթնացնել կամ հանդցնելը, պաշտպանության համապատասխան միջոցներ ձեռք առնելը և վնասվելու գեղքում անմիջապես ուղային հարձակման հետևանքները վերացնելուն ձեռնամուխ լինելը, — սրբ համար կան ոդային հետախուզության, դիտողության, ծանուցման ու կապի միջոցները : Սրանք կոչվում են ՀՈՊ-ի կառավարման միջոցներ, վորովհետեւ հակառղային պաշտպանության հրամանատարությանը թույլ են տալիս կառավարել պաշտպանության այլ ամբողջ սխտեմը :

ՀՈՊ-ի կազմակերպումը

Կարեռը վարչա-քաղաքական, տնտեսական կամ ռազմական նշանակություն ունեցող մեծ քաղաքների և այլ բնակավայրերի հակառղային պաշտպանության համար ըստ հնարավորության ողտաղործվում են ՀՈՊ-ի բոլոր միջոցները : Այսպիսի բնակավայրերը մեր յերկրի հակառղային պաշտպանության կազմակերպման սխտեմում կոչվում են «ՀՈՊ-ի կետեր» ; ՀՈՊ-ի կետերը դիմավորում են նրանց պետերը — ԲԳԿԲ հրամանատարներ, վորոնց նշանակում և ԽՍՀՄ Պաշտպանության ժողովրդական կոմիսարը :

ՀՈՊ-ի կետերը կործանիչ ավխացիայի, դենիթային հրետանու, զենիթային գնդացիրների, լուսարձակների, ձայնորսների, խոսիանման աերոստատների միջոցով պաշտպանելը կոչվում ե

ավխագենիքային պաշտպանությունը : Այդ պաշտպանությունը կազմակերպում է ռազմական հրամանատարությունը :

Միաժամանակ ողային հարձակումների սպառնալիքի տակ դունչող ամեն մի բնակավայրում կազմակերպվում է տեղական (քաղաքացիական) ՀՈՊ, վորի խնդիրն ե պաշտպանել բնակչությունը և վերացնել ողային հարձակումների բոլոր հետեւանքները :

Տեղական ՀՈՊ-ը քաղաքներում (ռայոններում) կազմակերպվում է աշխատավորների գեպուտատոնների Խորհուրդների կողմից Պաջապիտաքիմի և կարմիր խաչի ու կարմիր մահիկի ընկերությունների ամենաակտիվ մասնակցությամբ : Այս պաշտպանությունը, վորպես քաղաքների (ռայոնների) տեղական ՀՈՊ-ի պետեր ղեկավարում են Խորհուրդների նախագահները կամ ՀՈՊ-ի գծով յեղած նրանց տեղակալները : Քաղաքի (ռայոնի) տեղական ՀՈՊ-ի պետին կից լինում և շտաբ և մի շարք հասուկ ծառայություններ :

Քաղաքը բաժանվում է «ՀՈՊ-ի տեղամասերի», վորոնք սպասարկվում են ՀՈՊ-ի հատուկ տեղամասային զորախմբերի կողմից, այն ե՝ կառավարման (հետախուզության, դիտողության ու կապի), քիմիական (գազահանման), հրդեհաշեջ, բժշկասանիտարական, անասնաբուժական, վթարային-վերականգնողական և հասարակական կարգը պահպանող զորախմբերի կողմից :

ՀՈՊ-ի տեղամասի պետի և նրա շտաբի ղեկավարությամբ կազմակերպվում է ՀՈՊ այն տներում, հիմնարկներում, ձեռնարկներում և ուսումնական հիմնարկներում, վորոնք դանչվում են տեղամասի տերիտորիայում : Այդտեղ կազմակերպվում են ինքնապաշտպանության խմբեր . մեծ ձեռնարկություններում («ՀՈՊ-ի ոբյեկտներ») ինքնապաշտպանության խմբերի վիճակներ կազմակերպվում են ՀՈՊ-ի ոբյեկտային զորախմբեր :

ՀՈՊ-ի գծով տարվող աշխատանքը ղեկավարելու համար ամեն մի տան կամ բնակարանային վարչության մեջ, ամեն մի հիմնարկության, ձեռնարկության, ուսումնական հիմնարկի մեջ նշանակվում է ՀՈՊ-ի պետ : Տներում այդպիսի պետեր հանդիպանում են տների կառավարիչները կամ պարետները, ձեռնար-

կություններում, հիմնարկություններում, ուսումնական հիմնարկներում—սրանց զեկավայրները¹):

Հակառակին պաշտպանությունը կաղմակերպվում է դեռևս խաղաղ ժամանակ: Յերբ ողային հարձակումների ռեալ սպառնալիք է ծագում, վորպեսզի լիակատար մորիլիզացիոն պատրաստականության մեջ դնենք ՀՈՊ-ի բոլոր պատրաստված միջոցներն ու ուժերը, բնակավայրում կարող է հայտարարվել սպառնալից դրություն:

Սպառնալից դրություն հայտարարվում է խորհրդային իշխանության տեղական որդանների կողմից ուղղություն, հատուկ հայտարարություններով և քաղաքի տեղական ՀՈՊ-ի պետի կողմից՝ հրամանով: Բնակչությունը նախազգուշացվում է, վոր հակառակորդի ավիացիան կարող է ամեն ժամանակ յերեալ վոր տվյալ բնակուլայրի վրա ողային հարձակում կատարելու սպառնալիքը անպայման ռեալ և դարձել²):

Բայց սպառնալից դրություն մտցնելը դեռ չի նշանակում, թե ողային թշնամին արդեն դտնվում է դեպի տվյալ բնակավայրը տանող ճանապարհին: Անմիջական այդպիսի վտանք ծագելու մասին բնակչությանը հայտնվում է ողային տաղնապի:

Միքանի բնակավայրերում, մանավանդ այն բնակավայրերում, վորոնք սահմանից հեռու յեն դտնվում, սպառնալից դրություն մտցնելու մոմենտից մինչև անմիջական ողային վտանքի ծագումը կարող է զդալի ժամանակ անցնել (ժամեր, որեր): Խոկ սահմանին ժողովող կետերում ողային տաղնապի: ազդանշանը կարող է տրվել դեռ մինչև պաշտոնական սպառնալից դրություն մտցնելը— հակառակորդի ավիացիայի հանկարծակի հարձակման ժամանակ:

Բացի ողային տաղնապի ազդանշանը, ամեն մի բնակավայրում նախատեսվում էն քիմիական տաղնապի ազդանշաններ (այն դեպքի համար, յերբ թշնամին թն է գործադրում), հրդե-

¹⁾ ՀՈՊ-ի կաղմակերպումը տներում ավելի մանրամասնորեն քննարկ-ված և վերջն գիտում (թեմա 14):

²⁾ Սպառնալից դրություն մտցնելու դեպքում և ողային հարձակման պայմաններում բնակչության անելիքների կանոնները շարադրված են հետեւյալ (4-րդ) թեմայի մեջ:

Հային տաղնապի ազդանշան և, վերջապես, «ավարտ» ազդանշանը (բնակչությանը ազդարարելու համար, վոր ողային վտանգն անցել է): Այս բոլոր ազդանշանները բնակչությունը պետք է լավ յուրացնի դեռ խաղաղ ժամանակ: Խորհրդացին իշխանության տեղական որդանները նախորոք հայտարարում են, թե ինչ միջոցներով են տրվելու ՀՈՊ-ի ազդանշանները տվյալ բնակավայրում:

Ողային տաղնապի ազդանշանը («ՈՏ») տրվում է միայն քաղաքի (ուայնի) ՀՈՊ-ի հրամանատարության կարգադրությամբ դիտողական պոստերի (այսպես կաչված «ВНОС»-ների՝ ողային դիտողության, ծանուցման և կապի—воздушного наблюдения, оповещения и связи) անընդհատ գործող ցանցից ստացվող զեկուցումների հիման վրա: Ազդանշանը կարող է լինել հաշյունային (որինակ եկեղեցական հզոր սիրենաներ, ընդհատվող ֆաբրիկային, գործարանային և շողեքարշային շչակներ), լույսի և կոմքինացիոն ազդանշաններ: Բացի այդ, «ՈՏ» ազդանշանը տրվում է ողայինով:

Քաղաքի ՀՈՊ-ի պետի հրամանատարական կետից տրված «ՈՏ» ազդանշանն անմիջապես բռնում է կրկնում են բոլոր տները, ձեռնարկությունները, հիմնարկները և այլն: Դրա համար ողտադրժուում են տեղական, նախորոք պայմանավորված միջոցները, որինակ եկեղեցական զանգերը, եկեղեցական լույսի թարթելը և այլն: Կիրաւովում են նաև բնակարանները շրջելը, մանավանդ գիշեր ժամանակ:

Ողային տաղնապի ազդանշանով քաղաքի ամբողջ բնակչությունը և տեղական ՀՈՊ-ի ամբողջ կաղմակերպությունը նախադրուշացվում են, վոր անհրաժեշտ և միջոցներ ձեռք առնել անմիջական ողային վտանքից պաշտպանվելու համար և լիակատար մարտական պատրաստության մեջ դնել տեղական ՀՈՊ-ի բոլոր միջոցներն ու ուժերը: Գիշեր ժամանակ առաջին հերթին կիրաւովում են լուսագողարկումը:

Քաղաքի ամբողջ տերիտորիայում նախորոք մշակված պլանների համաձայն դիտում են դիտողական պոստեր՝ ՀՈՊ-ի զորախմբերից և ինքնապաշտպանության խմբերից: Պոստերի մի մասը տեղավորվում է աշտարակների վրա: Այդ ողային պոստերը դիտում են ողային հակառակորդի յերեալը և նրա գործողությունները, ավելացնելու մեջ ավայլությունը, հրդեհներ առա-

ջանալը, քամու ուղղությունն ու արագությունը: Բացի այդ, գիշերն այդ պոստերը հետևում են լուսաբողարկման լիակատարությանը:

Պոստերի մի մասը տեղավորվում է հրապարակներում, փողոցների խաչմերուկներում, բակերում և այլն: Վերերկրյա զիտողության այդ պոստերը դիտում են ավանումբերի անկման վայրերը, նրանց ներդրության բնույթը: Ճիշտ այնպես, ինչպես ողային դիտողության պոստերը, նրանք հետևում են լուսաբողարկման կանոնները պահպանելուն և դիտում են քամու ուղղությունն ու արագությունը:

